թեան Տեսուչներուն կողմէ։ Պատրիարքարանի կողմէ յատկապէս ներկայացուցիչ ղրկուած էին Հոգ. Տ. Տ. Գէորգ և. Կիւրեղ վարդապետները։

● Բամազան Պայրամի առթիւ փետրուար 8-ին Պատր. Փոխանորդ Գեր. Տ. Մկրտիչ Ս. Եպիսկոպոս Ազաւնունի, հետն ունենալով Հոգ. Տ. Տրգատ Վրդ.ը, շնորհաւորական այցելութիւն տուաւ **Երուսաղէմի Մեծ Մուֆթիին** (Ն. Վ. էլ Հաճ էլ Հուսէյնի), Երուսաղէմի **Վսեմ. Քաղաքապետին** (Բաղրպ Պէյ Նէշաշիպի), **Բուհի Պէյի**, **Մուսա Քեազիմ Փաշայի**, **Շէյխ Մահմուտ Էֆէնտիի**, **Իսմայիլ Պէյի**, **Նասուհի Պէյ Պէյտուճիի**, և **Ալի Ճարալլահ Էֆէնտիի** բնակարանները, և բացակայ գտնուողներուն ալ այցեւոմս թողուց։

● Պղեստինի Վսեմ. Բարձր Կոմիսէրի քոյրը **Տիկին Հոռոր**, հետևորդ տիկնոջ մ՝ընկերակցութեամբ Ս. Յակոբեանց Վանքը այցելեց փետր. 8-ին, և Հոգ. Տ. Կիւրեղ Վարդապետի կողմէ առաջնորդուեցաւ Մայր Տաճար, Պատրիարքարան և Վանուցս այլ մասերը։

● **Եգիպտոսի Վարչապետը Ն. Վ. Իսմայիլ Սրկի Փաշա** փետր. 9-ին Երուսաղէմի կայարանը ժամանեց և ընդունուեցաւ պատշաճ շքով։

Ի դիմաց Ամեն. Ս. Պատրիարք Հօր, Փոխանորդ Սրբազանը (Գեր. Տ. Մկրտիչ Եպս.), հետն ունենալով Հոգ. Տ. Գէորգ Վրդ.ը կայարանի մէջ բարի գալուստ մաղթեց Նորին Վսեմութեան։

Նոյն օրը յետ միջօրէին Սրբազան Պատրիարք Հայրը, հետն ունենալով Հոգ. Տ. Կիւրեղ Վրդ.ը և Դիւանապետ Գր. Կ. Նուրեանը, ներկայ գտնուեցաւ Վսեմ. Բարձր Կոմիսէրին ապարանքին մէջ **ի պատիւ Եգիպտոսի Վսեմ. Վարչապետին** տեղի ունեցած պաշտօնական ընդունելութեան և թէյասեղանին։

● Սրբազան Պատրիարք Հայրը, հետն ունենալով Հոգ. Տ. Տ. Համազասպ և Կիւրեղ Վրդ.ները և Տիար Կ. Նուրեանը, փետր. 10-ին այցելեց Մեծարգոյ Տիար **Ֆրէտրիհ Մուրատին**, Երուսաղէմի Գերմանական Հիւանդանոցին մէջ, և իր ցաւակցութիւնները յայտնեց, անոր քեռորդւոյն՝ Ցոպպէցի Գր. Օննիկ Զէթինեանի մահուան առթիւ։

● Նոյն օրը (10 փետր.) Սրբազան Պատրիարք Հայրը, Հոգ. Տ. Կիւրեղ Վրդ.ի և Գր. Կ. Նուրեանի հետ ներկայ գտնուեցաւ **Կինգ Դէյվիդ Օտելին** մէջ եգիպտական հիւպատոսին կողմէ ի պատիւ Եգիպտոսի Վարչապետ **Սրկի Փաշայի** տրուած թէյասեղանին։

● Փետր. 17-ին Սրբազան Պատրիարք Հօր այցելեց Ռամլէի Կառավարիչ **Գր Հ. Հ. Պոլլոկ**։

● Ամեն. Սրբ. Պատրիարք Հայրը, հետն ունենալով Հոգ. Տ. Կիւրեղ Վրդ.ը, փետր. 22-ին ներկայ գտնուեցաւ քաղաքիս Ամերիկեան Հիւպատոսարանին մէջ Նախագահ **Ուաշինկտոնի** ծննդեան երկհարիւրամեակին առթիւ տեղի ունեցած ընդունելութեան և թէյասեղանին։

● Հոգ. Տ. Կիւրեղ Վրդ.ի և Վեր. Հայր Գրիգոր Ամենի. Սրբ. Պատրիարք Հօր ներկայացաւ Անգլիացի **Վեր. Արքիպատրաստ Ռիկէյ** (Նախագահ Անգլիկան և Արևելեան Եկեղեցիներու Ընկերակցութեան) հետն ունենալով Վեր. Հայր Բրկոտանը։ Ցարգելի հիւրերը կէս ժամի չափ սիրալիր տեսակցութիւն մը ունեցան Նորին Ամենապատուութեան հետ։ Ներկայ էր նաև Լուսաբարապետ Սրբազանը։

ՈՒՂՂԱՓԱՌ ԱՍՈՐԻՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ–ՊԱՏՐԻԱՐՔԻ ՎԱԽՃԱՆՈՒՄԸ

Վերջերս Հնդկաստանի մէջ վախճանած **Ասորւոց Անցիոքի Կթղ.-Պատրիարքին**, **Ամեն Տ. Իգնատիոս Էլիաս Դ.ի** հոգւոյն համար հոգեհանդիստան պաշտամունք տեղի ունեցաւ փետր. 21-ին քաղաքիս Ասորւոց Ս. Մարկոս եկեղեցիին մէջ։

Պատր.Փոխանորդ Գեր. Տ. Մկրտիչ Սրբազան, Հոգ. Տ. Պարգև Վրդ.ի հետ ներկայ գտնուեցաւ նոյն պաշտամունքին եւ այցելութիւն տալով Փոխանորդին, ցաւակցութիւն յայտնեց Ասորի Միաբանութեան։

Այս այցելութեան փոխադարձաբար Ասորւոց Եպիսկոպոսի Փոխանորդ Հոգ. Եպգոպ Վրդ., երկու միաբան հետևորդներով փետր. 25-ին եկաւ շնորհակալութիւն յայտնել Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր, Ս. Աթոռոյս կողմանէ յայտնուած ցաւակցութեանց համար։

— Ամեն. Տ. Իգնատիոս Կթղ.-Պատրիարք ծնած է 1868 ին, Մալաթիա։ Իր կրթութիւնը ստացած է **Դէր-Զէզաճրանի** մէջ։ Գիտէր ասորերէն, արաբերէն և թուրքերէն լեզուները։ Վարած է Պետրոս Դ. Ասորւոց Պատրիարքին աւագ քարտուղարութեան պաշտօնը։

Բազում անգամներ նուիրակ գացած է այլևայլ տեղեր՝ վէճեր խաղաղեցնելու համար։ 1895-ի ջարդին, Տիգրանակերտի մէջ, շատ մը զոհեր մահուրնէ ազատած է, պահելով զանոնք Մար Կիրիակոս վանքին մէջ։ 1908-ին ձեռնադրուած է Եպիսկոպոս, Տիգրանակերտի մէջ։ 1912ին անցած է Մուսուլ։ 1915-ին եղած է Պատրիարքական Տեղապահ։ Ջանադիր եղած է ասորիներու մէջ դպրոցական գործին զարգացման։ 1917-ին ընտրուած է Պատրիարք Անտիոքայ։ Մեծ պատերազմէն ետք անցած է Կոստանդնուպոլիս և շքանշան ստացած է Սուլտան Ռաշատէտտինէ։ Երեք տարի Կ. Գոլիս մնալէ ետք՝ անցած է Անգորա, այցելած է Մուստաֆա Քէմալ Փաշայի, որ հրաւիրած է զինք Ազգային Մեծ ժողովի բացումին։ 1923-ին քաշուած է իր աթոռը՝ Մարտին։ 1925-1927 այցելած է Երուսաղէմ։ 1927-1931 մնացած է Մուսուլ, ու ապա կարգ մը վէճեր կարգադրելու համար մեկնած դէպի Հնդկաստան, ուր պատահեցաւ իր վախճանումը։

Եղած է շինարար և կրթասէր պատրիարք մը։

digitised by A.R.A.R.@